

«ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն Կարեն Կարապետյանի զեկույցը «ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳ. ՆԵՐԿԱ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ» սեմինարում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1** **Բնական գազի եվրոպական շուկան**
 - 1.1 Բնական գազի շուկան
 - 1.2 Հայաստան առաքվող բնական գազի գնագոյացման վրա ազդող գործոնները
- 2** **Բնական գազի շուկան Հայաստանի Հանրապետությունում**
 - 2.1 Գազի սպառման դինամիկան
 - 2.2 ՀՀ սպառողներին գազամատակարարման վերականգնման ծրագրի իրականացում և գազաբաշխիչ համակարգի զարգացում
 - 2.3 «Հայրուսգազարդ» ՓԲԸ հասույթը և շահույթը
 - 2.4 Էլեկտրաէներգիա
- 3** **Հայաստանի բնական գազի շուկայի կանխատեսումային գնահատականները**
 - 3.1 Հայաստանի Հանրապետության գազասպառման կանխատեսումը
 - 3.2 Հայաստան գազի մատակարարումների անվտանգությունը
- 4.** **«Հայրուսգազարդ» ՓԲԸ զարգացման ռազմավարությունը**
 - 4.1 Գազի մատակարարման էներգետիկ անվտանգության և հուսալիության ապահովումը
 - 4.2 Շուկայի ընդլայնումը և գազի իրացման ծավալների ավելացումը
 - 4.3 Էլեկտրաէներգիայի արտահանում
 - 4.4 Տարածաշրջանային ինտեգրացում
- 5** **Եզրակացություններ**

1. Բնական գազի եվրոպական շուկան

1.1 Բնական գազ եվրոպայում

20-րդ դարի 90-ական թթ. բնական գազի բաժինը առաջնային էներգետիկ ռեսուրսների համաշխարհային արտադրանքում ավելացել է մինչև 20 %: Ներկա դրությամբ բնական գազի համաշխարհային հիմնական պաշարները բաշխված են հետևյալ երկրներում`

Երկիր	Պաշարներ տրլն.խ.մ.	Արտադրություն մլրդ.խ.մ.	Սեփական սպառում մլրդ.խ.մ.
Ռուսաստան	47,57	542,4	372,7
Իրան	23,00	60,6	65,0
Կատար	14,4	32,5	16,0
Ալժիր	4,52	78,2	21,6
Իրաք	3,11	3,4	3,4
Թուրքմենստան	2,86	47,9	12,9
Ուզբեկստան	1,87	53,5	51,1
Ղազախստան	1,84	10,8	10,1
Նիդերլանդներ	1,77	61,4	39,3
Լիվիա	1,31	5,7	4,2
Նորվեգիա	1,25	57,5	4,5
Եգիպտոս	1,0	21,0	21,0
Ադրբեջան	0,85	5,2	8,4

Միջազգային գազի խորհուրդի (ՄԳԽ) գնահատմամբ բնական գազի համաշխարհային պաշարները կազմում են մոտ 400 տրլն. խ.մ սակայն դրա վերահաշվարկը որպես ապացուցված պաշար պահանջում է մեծ ծավալի երկրաբանահետախուզական աշխատանք (ապացուցված պաշարների ծավալը կազմում է դեռևս մոտ 170 տրլն. խ.մ): Դա կրավարարի մարդկությանը մոտ 60 տարի, իսկ հաշվի առնելով նոր հայտնագործությունները` 90-100 տարի:

Իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ եվրոպայի ավանդական մատակարարողների բաժինը (Նորվեգիա, Ալժիր), ինչպես նաև գազի արդյունահանումը ԵՄ, պլանաչափ կերպով կնվազի: Օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված կպահպանվեն առաքումները Հյուսիսային ծովի հանքավայրերից:

Ներկայումս «Գազպրոմ» ԲԲԸ-ն իր դուստր ձեռնարկություն «Գազէքսպորտ» ՍՊԸ միջոցով ապահովում է բնական գազի եվրոպայի պահանջարկի մինչև 30%-ը (130 մլրդ

«Հայֆուսզազարդ» ՓԲԸ

խոր.մ/տարեկան): «Գազպրոմի» հաշվարկներով մինչև 2008թ.-ը բնական գազի առաքումները Եվրոպա կաճեն մինչև 205 մլրդ. խոր. մ: Այնուամենայնիվ, արդեն ուժի մեջ է մտել ԵՄ դիրեկտիվը, որն արգելում է Եվրամիության երկրների կախվածությունը բնական գազի մեկ մատակարարողից ավելի քան 50% չափով: Միաժամանակ, սկսվել է գազի շուկայի ազատականացումը, որը նպատակ ունի ձևավորել մրցունակ միջավայր:

Եվրոպայում ընդհանուր առաջարկը 2005թ.-ին կկազմի 580-610 մլրդ խոր.մ: Ռուսաստանի բաղադրիչ մասը գնահատվում է 130-160 մլրդ խոր.մ: Մինչև 2010թ.-ը պահանջարկը և առաջարկը Եվրոպայում կարող են առավելագույնը կազմել համապատասխանաբար 610-640 մլրդ խոր.մ և 670-700 մլրդ խոր. մ:

Եվրոպայում բնական գազի պահանջարկի ընդլայնման հիմնական գործոններից մեկը կարող է դառնալ ջերմաէլեկտրակայանների փոխադրումը այս էներգակրի վրա: Կանխատեսումների համաձայն, բնական գազի պահանջարկը Արևմտյան Եվրոպայում ամբողջովին վերցված մինչև 2025թ.-ը կաճի միջին հաշվով տարեկան 2,4% և 2005թ.-ին կհասնի 730 մլրդ խոր.մ` 2001թ.-ի 420 մլրդ խոր.մ-ի հանդեպ:

Բնական գազի գնի դինամիկան, որպես կանոն, հետևում է նավթի գնի փոփոխմանը որոշակի ժամանակային չափով: Եվրոպայի խոշորագույն գազի ընկերությունները մեկը մյուսի հետևից հայտարարում են կենցաղային գների բարձրացման մասին, որն իր հետևից բերում է վառելիքի գնի աճ արդյունաբերական և կոմունալ սպառողների համար: Գազի գները ունեն աճման կայուն տեմպեր, չնայած Եվրահանձնաժողովի մտադրությամբ նրանք պետք է նվազեն` Եվրոպայի ազատականացված շուկայում մրացկցության ուժեղացման և առաջարկների ավելացման արդյունքում:

Մի շարք փորձագետների կանխատեսումների համաձայն, 2005թ.-ին ռուսական գազի վաճառքի միջին գինը Եվրոպայում կկազմի շուրջ \$142` 1000խոր.մ համար:

Եվրոպայի խոշորագույն գազի ընկերությունները սկսել են հայտարարել գների մոտալուստ ավելացումը օգոստոսի վերջին –սեպտեմբերի սկզբին:

Պահանջարկի ընդլայնումը տարածաշրջանում գազի հետախուզված պաշարների սպառման պատճառով սեփական արտահանման նվազեցման պայմաններում կբերի այն բանին, որ զգալիորեն կավելանա նրա կախվածությունը այդ էներգակրի ներկրումից: Այսպիսով` գազի ներկրման բաժինը երրորդ երկրներից ԵՄ գազասպառման երկրներ (15 պետություն), ինչպես սպասվում է, կբարձրանա 2000թ. 40%-ից մինչև 70%-ը 2020թ.-ին:

Ի տարբերություն շատ ուրիշ երկրների, գազի ռուսական շուկայում հաստատվել են ոչ բարձր, «մեծաշնորհային ցածր» գներ: Երկար տարիների արհեստական պահպանումից հետո, գազի գները տարեկան ավելանում են: Սակայն համաձայն «Գազպրոմ» ԲԲԸ-ի, գների աճի տեմպերը, ըստ 2004թ.-ի արդյունքների, չեն ապահովել գազի վաճառքի շահութաբերությունը ներքին շուկայում:

Միջազգային գների հետ համեմատած Ռուսաստանի Դաշնությունում բնական գազի գինը շատ ցածր է` ռուսաստանի սպարողը ստանում է այն ընդամենը վճարելով շուրջ 20 ԱՄՆ դոլարին համարժեք գումար, այն դեպքում երբ Եվրոպայում գազի գինը տատանվում է 350-550 ԱՄՆ դոլարի սահմաններում: Բնական է, որ այս պայմաններում Եվրոպական երկրներում համատարած կերպով զարգանում էր էներգախնայողական և բարձր արդյունավետությունը ունեցող տեխնոլոգիաների կիրառումը, այն դեպքում երբ Ռուսաստանում գազի ուղակի կորուստները ունեն լայն տարածում:

Այսպիսով, Ռուսաստանում առկա բնական գազի ներքին գները բացասական ազդեցություն ունեն Ռուսաստանի Դաշնության ամբողջ տնտեսության վրա: Ներկա իրավիճակի դեպի լավը փոփոխության համար կարևոր քայլ կարող է լինել Ռուսաստանի Դաշնությունում էներգակիրների գների ազատականացումը, ինչը կարող է դառնալ կարևոր գործիք ՌԴ տնտեսության կառուցվածքի փոփոխման, ինչպես նաև երկրի տնտեսությունը դեպի առաջատար և մրցունակ տեխնոլոգիաների վերակողմնորոշման

գործում: Ցանկացած դեպքում, Ռուսաստանում ակնկալվում է նաև բնական գազի ներքին գների պլաննաչափ բարձրացում:

1.1 Հայաստան առաքվող բնական գազի գնի ձևավորման վրա ազդող գործոնները

Ներկայումս բնական գազի գինը Հայաստանի Հանրապետության համար կախված է լուրջ գործոններից: Բերենք դրանցից մի քանիսը՝

- Բնական գազի գնման գինը թուրքմենստանում, Ղազախստանում և Ուզբեկստանում,
- Բնական գազի տարանցման ծախսերը,
- Այլընտրանքային մատակարարողների առկայությունը,
- Տարանցիկ հնարավորությունների առկայությունը:

Հայաստանի Հանրապետություն մատակարարվող բնական գազի գնագոյացման վրա լուրջ դեր է խաղում թուրքմենական բնական գազի գինը: Թուրքմենական բնական գազի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է նաև մատակարարող «Գազէքսպորտ» ՍՊԸ կողմից Հայաստանի նկատմամբ կիրառվող փոխհաշվարկային պայմաններով բնական գազի համար, մասնավորապես՝ 50% քվոտայի առկայությունը ապրանքային առաքումների համար:

Հարկ է նշել, որ վերջին ժամանակներս նկատվում է բոլոր գնագոյացման գործոնների փոփոխման միտում դեպի թանկացում: Թերևս ճշգրիտ է այն պնդումը, թե բնական գազի գինը թուրքմենստանում երբեք վերջնական չի կարելի համարել՝ նույնիսկ կարճաժամկետ հեռանկարում: Դրա վկայությունը եղավ թուրքմենական գազի գնման գնի փոփոխությունը Ուկրաինայի և Ռուսաստանի համար: 2005թ.-ի հունվարի 1-ից թուրքմենական գազի գինը բարձրացվել է «Նաֆտոգազ Ուկրաինա» ընկերության համար (44-ից մինչև 58 դոլար հազար խորանարդ մետրի համար):

Գազի գինը թուրքմենստանի և Ուզբեկստանի սահմանին հաստատվում է ամեն տարի և մինչ օրս կազմել է 44 դոլար/հազար խորանարդ մետր Ուկրաինայի համար: Սակայն 2005թ. գազի գնի շուրջ բանակցությունների ժամանակ թուրքմենական կողմը կտրուկ բարձրացրել է իր պահանջները մինչև 60 դոլար/հազ.խոր.մ համար: Դա բացատրվում էր համաշխարհային շուկայում նավթի և գազի կայուն բարձր գներով, ինչպես նաև մի շարք ապրանքների կտրուկ թանկացմամբ, որոնք առաքվում են Ուկրաինայի կողմից բարտերային սխեմայի շրջանակներում:

Ի լրումն վերը նշվածի ռուսական գազի գինը Ուկրաինայի համար կարող է աճել մոտ 3 անգամ՝ մինչև 160 ԱՄՆ դոլար հազ. խ.մ. համար: «Գազպրոմ» ԲԲԸ և Ուկրաինայի Նախագահի միջև կայացած վերջին հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ սկսած 2006թ.-ից գազի տարանցման և առաքումների դիմաց վճարումները եվրոպական գների և սակագների համաձայն տարադրամով կատարելու վերաբերյալ: Համաձայն «Գազպրոմ» ԲԲԸ-ի տեղեկատվության՝ ներկայումս Ուկրաինա մատակարարվող գազի գինը, հաշվարկված net back մեթոդով (գազի գինը «բազային» իրացման շուկայում հանած տարանցման ծախսերը) կազմում է շուրջ 160 ԱՄՆ դոլար հազ. խ.մ. համար:

2005թ.-ից թուրքմենստանը բնական գազ է առաքում «Գազպրոմ» ԲԲԸ-ին 44 ԱՄՆ դոլար/հազար խոր.մ գնով: Թուրքմենական գազի գնման ծավալը 2005թ.-ին կկազմի 6-7 մլրդ. խոր.մ: Միաժամանակ հարկ է նշել, որ այս տարվանից սկսած թուրքմենստանը որոշել է Ռուսաստանից պահանջել առաքումների 100% վճարում տարադրամով:

Սկսած 2002թ.-ից թուրքմենական բնական գազի առքի գինը փոփոխվել է 3 անգամ. 1,0 հազ. խ.մ-ի համար 42 ԱՄՆ դոլարից մինչև ներկայիս 58 ԱՄՆ դոլար: Ընդ որում գազի գնի ընդհանուր բարձրացումը կազմել է 38%:

«Գազէքսպորտ» ՍՊԸ կողմից երկարաժամկետ պայմանագրերով Եվրոպա առաքվող ռուսական բնական գազի արժեքը կազմում է 120-130 ԱՄՆ դոլար/հազար խոր.մ:

«Գազէքսպորտ» ՍՊԸ-ն հանդիսանում է նաև բնական գազի հիմնական մատակարարողը ԱՊՀ երկրների համար՝ ժամանակին փախարհներով «Իտերա» ընկերությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են «Գազէքսպորտ» ՍՊԸ կողմից տարածաշրջանի երկրներ առաքվող բնական գազի գները (2005թ.)

Երկիրը	Առաք. ծավալը	Ընդ. սպառումը	Գինը DAF (2005)	Գնի աճը	Ներքին սակագինը	Վճարման պայմանները	Սեփ. արտ. աղբյուր	Տարանցում
	մլրդ.մ ³	մլրդ.մ ³	\$/1.000 մ ³	%	\$/1.000 մ ³			
Հայաստան	1,7	1,7	54	0	79,1	50%:50%	-	-
					134			
Վրաստան	0,8	0,8	60	3,3	148.2	100% (\$)	-	+
Ադրբեջան	5,5	10,8	60	15,4	50	100%(\$)	+	-
Լեհաստան	12,0	8,0	120	9,1	270	100% (\$)	+	+
Թուրքիա	24,9	25,6	108*	0	227	100% (\$)	+	+

* - միջինացված գինը ըստ երեք ներմուծման պայմանագրերի

+ - կա

- - չկա

Բացասական տեղեկությունները Հայաստանի համար համարվում Ուզբեկստանի, Ղազախստանի և Ռուսաստանի տարածքներով անցնող բնական գազի տարանցիկ փոխադրման արժեքի հետևողական բարձրացումը: Տարանցման վճարի չափի փոփոխությունը 5 տարիների համար ունի հետևյալ տեսքը՝

	2002թ.		2003 թ.		2004 թ.		2005 թ.		2002-2005
	\$	\$	%	\$	%	\$	%	%	
Ուզբեկստան	0,68	0,73	7.35	0,73	0	0,76	4.1	11,76	
Ղազախստան	0,75	0,68	-	0,68	0	0,76	11.76	11,76*	
Ռուսաստան	1,1	1,1	0	1,29	17.27	1,35	4.65	22,73	

Աղբյուրը՝ «Գազպրոմ» ԲԲԸ

* - 2003-2005

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից, տարանցիկ երկրները կայուն կերպով բարձրացնում են բնական գազի տարանցման վճարը:

Թուրքմենստանում գազի գնի բազմաթիվ բարձրացման և ԱՊՀ երկրներում տարանցիկ երկրների տարանցման սակագնի բարձրացման հետևանքով 2002-2005թթ. ընթացքում տեղի է ունեցել ներմուծվող բնական գազի գնի առնվազն 3 անգամ բարձրացում: Ընդ որում նշված ժամանակահատվածում (2002-2005թթ.) գազի առքի գնի բարձրացման տոկոսը կազմել է.

Ուկրաինա - 38%

Վրաստան, Ադրբեջան - 15%

Բալթյան երկրներ (Լատվիա, Էստոնիա, Լիտվա) - 200%

Այսպիսով, կարելի է փաստել, որ վերջին տարիներին նկատվում է բնական գազի գնի աճման միտում՝ կապված վերը նշված համալիր գործոնների հետ: Վերոնշյալ գործոններին անհրաժեշտ է ավելացնել բնական գազի համաշխարհային պայմանագրային գների կայուն բարձրացումը՝ ոչ վերջին հերթին պայմանավորված պահանջարկի զերազանցումով առաջարկի նկատմամբ, օպերատոր-ընկերությունների ծառայությունների թանկացմամբ, գազի արդյունահանման և տեղափոխման մեջ թանկ տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչպես նաև այլ վրադիր ծախսերի ավելացմամբ՝ կապված բնապահպանական թանկ միջոցառումների և այլն պարտադիր կատարման հետ:

2. Բնական գազի շուկան Հայաստանի Հանրապետությունում

2.1 Գազասպառման դինամիկան


Հայաստանում վերջին մի քանի տարիների գազի սպառման դինամիկան ունի աճման հաստատուն տեմպեր (տես՝ ստորև բերված աղյուսակը):

	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.*
Ներկրման ծավալը	1070,30	1200,90	1332,57	1700,00
<i>Էներգետիկ սեկտոր</i>	518,70	495,00	537,00	-
<i>Արդյունաբերություն</i>	193,90	209,00	276,60	-
<i>Բնակչության սեկտոր</i>	101,30	153,00	220,50	-
<i>Այլ սպառողներ</i>	138,10	177,00	188,30	-

* - կանխատեսման ցուցանիշը

Վերը նշված տեմպերը բացատրվում է հետևյալ հիմնական գործոնների ազդեցությամբ՝


- ՀՀ սպառողների գազամատակարարման վերականգնման ինտենսիվ ծրագրի իրականացմամբ և գազաբաշխիչ համակարգի զարգացմամբ, որը կբերի բնակչության կողմից գազի սպառման ծավալների ավելացմանը և «Հայֆուսզագարդ» ՓԲԸ կողմից վաճառքի համապատասխան ծավալների աճին:
- ՀՀ տնտեսության արդյունաբերական և առևտրական սեկտորների կողմից գազասպառման աճի նկատելի տեմպերից:
- Բնական գազի գնման անփոփոխ գնի պահպանմամբ, որը համապատասխանում է Հայաստանում բոլոր սպառողների խմբերի համար կայուն վճարունակ պահանջարկին:
- Ջեռուցման համակարգի լայնածավալ անցումը բնական գազով աշխատող սարքերի վրա:



2.2 ՀՀ սպառողներին գազամատակարարման վերականգնման ծրագրի իրականացում և գազաբաշխիչ համակարգի զարգացում

Ստորև նշված աղյուսակում բերված են տվյալներ Հայաստանի Հանրապետության գազասպառողներին բնական գազի մատակարարման վերականգնման ծրագրի իրականացման վերաբերյալ (*- նշանակում է պոտենցիալ բաժանորդների թիվը)

	1992 -1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Նոր բաժանորդների քանակը	0	28480	40734	19719	12070	11466	19744	54531	83042
Բաժանորդների ընդհանուր քանակը	0	28480	69214	88933	101003	112469	132213	186744	269786 (369700)*



«Հայֆուսգազարդ» ՓԲԸ պլանների համաձայն Հայաստանում գազամատակարարման վերականգնման ծրագրի ինտենսիվ փուլը կավարտվի մինչև 2007թվականը՝ ըստ հետևյալ գրաֆիկի.

- 140 000 նոր պոտենցիալ սպառողներ 2005թ.-ին
- 72 000 նոր պոտենցիալ սպառողներ 2006թ.-ին
- 48 000 նոր պոտենցիալ սպառողներ 2007թ.-ին

Հայաստանի Հանրապետությունում գազիֆիկացման տեմպերն ու մասշտաբները համարվում են աննախադեպ ոչ միայն տարածաշրջանի երկրների համար: Ըստ էության, կարելի է փաստել, որ մինչև 01.01.2008թ.-ը գազամատակարարման վերականգնման ծրագրի ակտիվ փուլը գործնականորեն ավարտված կլինի:


2.3 «Հայֆուսգազարդ» ՓԲԸ հասույթը և շահույթը

«Հայֆուսգազարդ» ՓԲԸ ղեկավարության կողմից ձեռնարկած քայլերը Ընկերության ֆինանսական վիճակի բարելավման ուղղությամբ սկսեցին դրական արդյուքներ տալ դեռևս 2002թ.-ին: 2002-2004թթ. հաջողվեց Ընկերությունը վնասաբերից դարձնել շահութաբեր, որին նպաստեց մի շարք համալիր միջոցառումների իրականացումը, ուղղված առաջին հերթին «Հայֆուսգազարդ» ՓԲԸ կայուն, ոչ-վնասաբեր գործունեության ապահովմանը: Նշված միջոցառումների շարքում առավել կարևոր դեր խաղացին՝

- Վճարումների կարգապահության աճ՝ սպառողների կողմից բնական գազի օգտագործման համար,
- Լրացուցիչ ֆինանսական աղբյուրների համատարած ներգրավում,

- Համակարգի վերակառուցում, գազամատակարարման հուսալիության բարձրացում և գազի կորուստների նվազեցում,
- Բնակչության գազամատակարարման վերականգնման ծրագրի իրականացում և գազի իրացման շուկայի ընդլայնում հանրապետությունում:

Ընկերության եկամուտների դինամիկան ներկայացված է ստորև բերված դիագրամում՝



Ներկա դրությամբ «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն Հայաստանում զբաղեցնում է (AERPLAC-ի տվյալները)

1-ին տեղը՝ կանոնադիր կապիտալի գումարով (280,0 մլն ԱՄՆ դոլար),

1- ին տեղը՝ ակտիվների գումարային արժեքով,

3-րդ տեղը՝ ՀՀ պետբյուջե հարկերի վճարման գումարով,

3-րդ տեղը՝ մատուցվող ծառայությունների գծով:

2005 թվականի առաջին եռամսյակի տվյալներով ՀՀ պետբյուջե վճարված հարկերի գումարով և մատուցվող ծառայությունների գծով «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն Հայաստանում զբաղեցնում է 2-րդ տեղը:

2.4 Էլեկտրաէներգիա

Էլեկտրաէներգիայի մատակարարումը Հայաստանի էներգահամակարգից Վրաստանի էներգահամակարգ համարվում է «Հայֆուսգազարդ» ՓԲԸ կայուն եկամուտ բերող գործունեություններից մեկը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտահանվող էլեկտրաէներգիան արտադրվում է ջերմային էլեկտրակայաններում՝ որպես վառելիք օգտագործելով բնական գազը, «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն դիտարկում է գործունեության այս տեսակը որպես բիզնեսի լրացուցիչ տեսակ, որը հնարավորություն է ստեղծում ընկերության համար ստանալու զգալի եկամուտ: Այս նպատակի համար «Հայֆուսգազարդ» ունի էլեկտրաէներգիայի արտահանման հատուկ լիցենզիա՝ տրված կարգավորող հաստատության ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

2002թ. դեկտեմբերից մինչև 2003թ. ապրիլ ամիսը «Հայֆուսգազարդ» ՓԲԸ կողմից Վրաստան է արտահանվել շուրջ 178,0 մլն կՎտ ժ. էլեկտրաէներգիա՝ 4.45 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: 16.10.2004թ. մինչև 15.05.2005թ. ժամանակահատվածը

Վրաստան է արտահանվել շուրջ 141,0 մլն կՎտ ժ. էլեկտրաէներգիա՝ 3.6 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով:

3. Հայաստանի բնական գազի շուկայի կանխատեսումային գնահատականները

3.1 Հայաստանի Հանրապետության գազասպառման կանխատեսումը

Հանրապետության գազի ոլորտի զարգացման հեռանկարների որոշման համար անշուշտ անհրաժեշտ է տրամադրության տակ ունենալ միջին ժամկետի կանխատեսման տվյալներ հետյալ ասպարեզներում՝

- հանրապետության տնտեսության զարգացում (ՀՆԱ աճ),
- էներգասպառում,
- հանրապետության էներգետիկ հաշվեկշռի փոփոխություն,
- նոր էներգետիկ հզորությունների ներդրման պլաններ և ծրագրեր, մասնավորապես՝ նոր ՁԷԿ-եր (Երևանի ՁԷԿ, Հրազդանի ՁԷԿ-ի #5 բլոկ),
- այլ ներդրումային պլանների և ծրագրերի իրականացում (Իրան-Հայաստան գազատար և այլն):

Առկա տվյալների վերլուծությունից ելնելով՝ ստորև բերվում են ՀՀ բնական գազի ներկրման դինամիկայի երեք կանխատեսումային տարբերակներ մոտակա 10 տարիների կտրվածքով (մլն. խոր.մ):


	SOFRECO	ARG I		ARG II		ARG III	
	ներկրում	ներկրում	սպառում	ներկրում	սպառում	ներկրում	սպառում
2005	2304,3	1620,7	1490,7	1700,0	1575,0	1780,0	1630,2
2006		1752,2	1610,0	1887,0	1748,3	1984,7	1817,7
2007		1909,9	1754,9	2094,6	1940,6	2212,9	2026,7
2008		2081,8	1912,8	2325,0	2154,0	2467,4	2259,8
2009		2269,1	2084,9	2580,7	2391,0	2751,2	2519,7
2010	3390,9	2450,7	2251,7	2864,6	2654,0	3067,6	2809,4
2011		2646,7	2431,9	3093,8	2866,3	3251,6	2978,0
2012		2858,5	2626,4	3310,3	3066,9	3446,7	3156,7
2013		3087,2	2836,5	3542,1	3281,6	3653,5	3346,1
2014		3334,1	3063,5	3790,0	3511,3	3872,7	3546,8
2015	4353,4	3469,7	3308,5	4055,3	3757,1	4105,1	3759,6

SOFRECO- կանխատեսում արված 2003թ.-ին ֆրանսիական SOFRECO ընկերության կողմից,

ARG I – հռետեսական տարբերակ

ARG II – չափավոր տարբերակ

ARG III – լավատեսական տարբերակ



3.2 Հայաստանում գազի առաքումների անվտանգությունը

Վերը նշված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ լավատեսական սցենարի համաձայն Հայաստանում բնական գազի ներկրման տարեկան ծավալի կանխատեսվող աճը մինչև 2010թ.-ը չի գերազանցի 3,5 մլրդ խոր.մ (2010 թ.): Դրանով իսկ հարկ է նշել, որ Հայաստանի գազատրանսպորտային համակարգի տեխնիկական հնարավորությունները (4,0 մլրդ.խոր.մ/տարեկան) թույլ կտան մոտ հեռանկարում ապահովել գազի ապագա ծավալների փոխադրումն ու բաշխումը՝ օգտագործելով վրաստանի տարածքով անցնող միակ գործող գազատարը:

Տվյալ գազատարը ապահովում է Հայաստանին բնական գազի անհրաժեշտ ծավալով և ունի առաքումների ծավալի ավելացման ոչ մեծ ռեզերվ: Այնուամենայնիվ, հարկավոր է հատկապես ուշադրություն դարձնել վրացական մասում լուրջ ներդրումների անհրաժեշտության վրա:

Միջին ժամկետի հեռանկարում «Հայրուսզագարդ» ՓԲԸ գործունեության մեկ այլ կարևոր ուղղություն է մայրուղային գազատարների վերականգնման ներդրումային ծրագրի իրականացումը առաջավոր տեխնոլոգիաների կիրառմամբ՝ բնական գազի անվտանգ և հուսալի տեղափոխման ապահովման, տեխնոգեն վթարների ռիսկի նվազեցման, միջազգային բնապահպանական նորմերի համապատասխանեցման նպատակով:

4. «Հայրուսզագարդ» ՓԲԸ զարգացման ռազմավարությունը

4.1 Գազի մատարարարման էներգետիկ անվտանգության և հուսալիության ապահովում

«Հայրուսզագարդ» ՓԲԸ զարգացման ռազմավարության մշակման ժամանակ հաշվի են առնվել հետևյալ հիմնական գործոնները՝

- Գազամատակարարման միակ՝ հյուսիսային ուղու առկայությունը,
- Վրաստանի տարածքով անցնող Հյուսիսային Կովկաս - Անդրկովկաս գազատարային տարանցիկ համակարգի ցածր հուսալիությունը,
- Ստորգետնյա պահեստարանում գազի պահեստավորման սահմանափակ ծավալը և պահեստարանի անբավարար տեխնիկական վիճակը,

Ռուսաստանի Դաշնությունից բնական գազի ներկրումը հսկայական նշանակություն ունի Հայաստանի էներգետիկ մատակարարումների գործում: Ընդ որում, ներկրման առաքումների իրականացման համար օգտագործվում է Վրաստանի գործող գազի ենթակառուցվածքը, որը գտնվում է բավականին անբավարար տեխնիկական վիճակում և համապատասխանաբար կարող է առաքումների ընդհատման պատճառ հանդիսանալ: Հարկ է առանձնապես նշել **Հյուսիսային Կովկաս-Անդրկովկաս** գազատարի ցածր հուսալիությունը: Առաքումների ընդհատումը կարող է լուրջ վնաս պատճառել Հայաստանի Հանրապետությանը, քանի որ տվյալ պահին գոյություն չունեն ոչ գազի առաքումների այլընտրանքային ուղիներ, ոչ էլ հնարավոր դեֆիցիտի փոխհատուցման համարժեք հզորությունների պահեստարան:

Հայաստան գազի մատակարարումների միակ ուղու առկայությամբ է պայմանավորում գազամատակարարման հրատապ դիվերսիֆիկացիայի /զանազանեցման/ անհրաժեշտությունը, որը ամբողջապես համահունչ է հանրապետության էներգետիկ ռազմավարությանը: Այս առումով Իրան - Հայաստան գազատարի կառուցման ծրագրերը Արմյանի Գազի Ստորգետնյա Պահեստարանի /ԳՍՊԿ/ վերականգնումն ու արդիականացումը Հայաստանի Հանրապետության համար ձեռք են բերում կենսական կարևորություն:

2004թ.-ի նոյեմբերին մեկնարկվեց **Իրան-Հայաստան** գազատարի շինարարությունը, որն իր մեջ ներառում է Հայաստանի Հանրապետության տարածքում անհրաժեշտ գազատրանսպորտային համակարգի կառուցում Հայաստանի Իրանի պետական սահմանի վրա՝ Հանրապետություն գազի մուտքի վայրից մինչև Հայաստանի առկա գազատրանսպորտային համակարգին ներմիացման ամենամոտ կետը:

2004 թ.-ի մայիսի 13-ին Հայաստանի Հանրապետությունը և Իրանը ստորագրել են համաձայնագիր երկու երկրների միջև գազատարի կառուցման վերաբերյալ: Գազատարը կունենա 141կմ երկարություն, ներառյալ 41կմ Հայաստանի Հանրապետության տարածքում և 100կմ՝ Իրանի տարածքում: Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատված է շուրջ 210-220 մլն ԱՄՆ դոլար: Նախատեսում է գազատարը շահագործման հանձնել մինչև 2007թ.-ի հունվարի 1-ը: Բնական գազի առաքումները պլանավորված է իրականացնել 2007թ.-ի հունվարին, իսկ գազը կմատակարարվի ջերմաէլեկտրակայաններ էլեկտրաէներգիայի արտադրման համար՝ նպատակ հետապնդելով վերջինիս հետագա արտահանումը Իրան: Ըստ համաձայնագրի, Հայաստան իրանական բնական գազի առաքումների ծավալը 20 տարիների ընթացքում կկազմի 36 մլրդ.խոր. մ:

Հարկ է հատուկ նշել, որ համաձայն ձեռքբերված պայմանավորվածությունների կառուցվող Իրան-Հայաստան գազամուղի կոչված է ապահովելու իրանական բնական գազի առաքումը Հայաստան բացառապես Հայաստանում էլեկտրաէներգիա արտադրելու և Իրան արտահանելու համար:

Ինչ վերաբերում է Հայաստանի տարածքով Իրանից դեպի եվրոպական շուկա տարանցիկ գազամուղի շինարարության հեռանկարների վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

Նախ և առաջ անհրաժեշտ է հաշվի առնել տարանցիկ գազամուղի շինարարության համեմատական բարձր արժեքը: Համաձայն փորձագիտական գնահատականների Իրանից ավելի մեծ տրամագծով (1200 մմ, որը ապահովում է տարեկան 4-5 մլրդ. խ.մ. բնական գազի առաքումներ) տարանցիկ գազամուղի շինարարությունը կպահանջի 360-400 մլն. ԱՄՆ դոլար գումարի չափով կապիտալ ներդրումներ: Տնտեսական տեսանկյունից վերը նշված նախագիծը շրջանակներում պահանջվող ներդրումները հնարավոր չէ փոխհատուցել բացառապես Հայաստանի ներքին շուկայով Հ պետական միջոցների հաշվին և պահանջվում է նախագծի արժեքի մոտ 70-80%-ի չափով ներդրումների ներգրավում: Ներկայիս պայմաններում Հայաստանի, Իրանի և արտերկրյա պոտենցիալ ներդրողների համար ընդունելի ներդրումների վերադարձը և սպասարկումը ապահովող սխեմայի մշակումը հանդիսանում է բավականին բարդ խնդիր:

և մեկ կարևոր ակնարկ՝ այդ կարգի տարանցիկ գազամուղների ծրագրերի շուրջ համաձայնությունները առաջին հերթին ձեռք են բերվում գազը վաճարող և գազը սպառող երկրների կողմից: Այդ համաձայնությունից հետո նոր սկսվում են բանակցություններ հնարավոր տարանցիկ երկրների հետ՝ ծրագրում իրենց մասնակցության պայմանների վերաբերյալ:

Այլ խոսքերով Իրանից տարանցիկ գազամուղը հանդիսանում է մի նախագիծ, որը պահանջում է համապատասխան գազի իրացման լուրջ շուկաների առկայություն և պայմաններ, ինչպես նաև մեծ գումարների հնարավոր սառեցում, ինչը ներկա պայմաններում բավականին բարդ խնդիր է հանդիսանում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ծայրահեղ կախվածությունը ներկրման էներգետիկ պաշարներից, կարելի է հաստատել, որ Աբովյանի ԳՄՊԿ-ն հանդիսանում է ՀՀ էներգետիկ անվտանգության և անկախության անհրաժեշտ մակարդակը երաշխավորող գործիքներից մեկը:

25-30մլն ԱՄՆ դոլար գնահատված ծրագիրը նախատեսվում է իրականացնել երեք փոխկապակցված փուլերով չորս տարիների ընթացքում: Ներկայումս ընկերությունը բանակցություններ է վարում մի շարք արտասահմանյան կոնսորցիումների հետ՝ ծրագրի ֆինանսավորման ուղղությամբ, իսկ առավել օպտիմալ գործընկերոջ ընտրության և ապագա գործարքի հիմնական պարամետրերի համաձայնեցման աշխատանքների ավարտը նախատեսվում է իրականացնել 2005թ.-ի ընթացքում:

Այսպիսով պետք է նշել, որ Իրան-Հայաստան գազատարի կառուցման ծրագրի և Աբովյանի ԳՄՊԿ վերակառուցման և արդիականացման իրականացումից հետո Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման հիմնահարցը զգալիորեն կլուծվի՝ նկատի առնելով Հայաստանի Հանրապետություն գազի մատակարարումների հուսալիության էական ավելացումը:

4.2 Շուկայի ընդլայնումը և գազի իրացման ծավալների ավելացումը

Ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշները անմիջականորեն կախված են Հայաստանի ներքին շուկայում իրացվող գազի ծավալներից: ՀՀ գործող բնական գազի սակագնի կառուցվածքում ներառված է բնական գազի գնման գինը, որը, հարկ է նշել, գազի միջազգային շուկայում հեռու է անփոփոխ մեծություն լինելուց և ենթակա է որոշակի փոփոխությունների:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են տվյալներ տարածաշրջանի երկրների բնական գազի աճի տեմպերի և գնման գների վերաբերյալ՝

Երկրները		Սպառումը	Սպառման աճի տեմպը	Առաքման գները, DAF
		մլն.խոր.մ	%	\$/1000 մ ³
Վրաստան	2003	800	1,2	60
	2004	890	11,2	60
	2005*	945	6,1	60
Հայաստան	2003	1034	8,6	54
	2004	1221	18,0	54
	2005*	1575	18,8	54
Ադրբեջան	2003	10233	3,6	52
	2004	10765	5,2	52
	2005*	11250	4,5	60
Իրան	2003	63500	5,7	-
	2004	68000	7,0	-
	2005*	71200	4,7	-
Թուրքիա	2003	21179	20,1	108
	2004	22174	4,7	-

	2005*	24980	12,6	-
--	-------	-------	------	---

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից, ներկայումս տարածաշրջանում բնական գազի առավել ցածր գին է հանդիսանում Հայաստանի Հանրապետություն առաքվող բնական գազի պայմանագրային ընթացիկ գինը՝ ամրագրված «Հայֆուսզագարդ» ՓԲԸ և «Գազպրոմ» ԲԲԸ միջև կնքված առք ու վաճառքի պայմանագրով, այն է՝ 54 ԱՄՆ դոլար/1,0 հազար խոր.մ: Ընդ որում, վերը նշված պայմանագրի համաձայն, Հայաստանի Հանրապետության համար կիրառվում են վճարման բացառիկ պայմաններ՝ պահպանելով 50%-ոց ապրանքային քվոտան /սահմանված նորման/: Ոչ մի ուրիշ պետություն տարածաշրջանում չունի վճարման այսպիսի պայմաններ գազի մատակարարողի հետ:


Վերը նշված բնական գազի գնման գնի փոփոխման կանխատեսման գնահատականների պայմաններում «Հայֆուսզագարդ» ՓԲԸ-ն ստիպված է Ընկերության զարգացման ռազմավարության մեջ հատուկ ուշադրություն դարձնել ինչպես Հայաստանում բնական գազի իրացման ծավալների կանխատեսման, այնպես էլ պահանջարկի կանխատեսումային կառուցվածքի վրա: Ընդ որում, անչափ կարևոր է ուշադրություն դարձնել հետևյալ գործոնների վրա՝

- Հայաստանի գազի շուկայում վճարունակ պահանջարկի կախվածությունը բնական գազի իրացման սակագնի մակարդակից,
- Պայմանականորեն հաստատուն ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտությունը գազարդյունաբերության անվտանգ և հուսալի շահագործման աջակցության համար՝ հաշվի առնելով գազի համակարգի յուրահատուկ բնույթը:

Վերը նշված պայմաններում, Ընկերությունը որպես ռազմավարական ուղղություններից մեկը ընտրում է ՀՀ սպառողներին գազամատակարարման վերականգնման լայնածավալ ներդրումային ծրագրի իրականացման և ՀՀ գազաբաշխիչ ցանցի ընդլայնման ուղին, որը վերջին հաշվով ուղղված է Ընկերության վաճառքի ավելացմանը:

Հենց դրանով ենթադրվում է, որ բնական գազի գնման գնի հնարավոր աճի ռիսկը կարող է փոխհատուցվել Հայաստանի ներքին շուկայում բնական գազի իրացման ծավալների աճով և համապատասխանաբար Ընկերության եկամուտների ավելացմամբ:

Ստորև բերված դիագրամը արտացոլում է բնական գազի իրացման փաստացի տվյալներ՝ ըստ սպառողների կատեգորիաների, ինչպես նաև նմանատիպ կանխատեսումային տվյալներ 2005-2007թթ. ժամանակահատվածի համար:



Ինչպես երևում է դիագրամից, բնակչության կողմից գազի սպառման բաժինը անշեղորեն աճում է և 2007թ.-ին կարող է հասնել 27% մակարդակի ընդհանուր սպառման կառուցվածքում, որը ՀՀ սպառողների գազամատակարարման վերականգնման լայնածավալ ներդրումային ծրագրի իրականացման արդյունք է հանդիսանում

4.3 Էլեկտրաէներգիայի արտահանում

«Հայֆուսզագարդ» ՓԲԸ-ն նպատակահարմար է գտնում ընկերության մասնակցությունը այդ տեսակի ծրագրերում՝ էլեկտրով մեծ հեռանկարից կապված ՀՀ էներգահամակարգից հարևան երկրների էներգահամակարգ կատարվող էլեկտրաէներգիայի արտահանման աճի հետ՝ իր հերթին հարևան երկրներում առկա էներգետիկ հզորությունների և համապատասխանաբար՝ էլեկտրաէներգիայի դեֆիցիտի հետ:

4.4 Տարածաշրջանային ինտեգրացումը

Տարածաշրջանի էներգետիկ շուկան ունի մի շարք բնորոշ յուրահատկություններ, մասնավորապես.

Բնական գազի շուկա.

- Բացառությամբ Հայաստանի, տարածաշրջանի բոլոր երկրները ունեն կամ սեփական էներգետիկ պաշարներ (նավթ, բնական գազ), կամ էլ տարանցման լուրջ հնարավորություններ:
- Ներկայումս միայն Վրաստանն ու Հայաստանն են, որ դիվերսիֆիկացված չեն բնական գազի առաքման տեսակետից:

Էլեկտրաէներգետիկական շուկա.

- Տարածաշրջանի երկրներից միայն Հայաստանն է, որ ունի էլեկտրաէներգետիկական հզորությունների ավելցուկ:
- Համաձայն վերլուծությունների Թուրքիայում, Իրանում և Վրաստանում էլեկտրաէներգիայի կանխատեսվող սպառման աճը գերազանցում է այդ երկրներում էլեկտրաէներգիայի նոր արտադրող հզորությունների շահագործման հանձնման նախատեսվող ժամկետները:

Հայաստանի համար որպես հեռանկարային շուկաներից մեկը անհրաժեշտ է դիտարկել հարևան Վրաստանի շուկան: Փորձագիտական եզրակուցությունների համաձայն Վրաստանը կարող է ընտրել հետևյալ ճանապարհներից մեկը.

- նոր ջերմային էլեկտրակայանների կառուցում,
- երկրում գոյություն ունեցող էլեկտրաէներգիայի դեֆիցիտի ծածկման նպատակով հարևան երկրներից էլեկտրաէներգիայի ներմուծում:

Երկրորդ ճանապարհ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունից Վրաստան էլեկտրաէներգիայի արտահանման ծավալները ապագայում մեծացնելու լուրջ հնարավորությունը՝ հաշվի առնելով ինչպես դրական փորձը անցյալում, այնպես էլ մեր երկրների միջև նոր բարձրավոլտ գծերի կառուցման հեռանկարը: Այլ խոսքերով, էլեկտրաէներգիայի միջպետական ներմուծման-արտահանման ծրագրերի տնտեսական արդյունքը պայմանավորում է էլեկտրաէներգիայի ներմուծման արդյունավետությունը նոր թանկարժեք ջերմային կայանների կառուցման համար պահանջվող ծախսերի համեմատությամբ:

Վերը նշված ենթատեքստում, «Հայֆուսզագարդ» ՓԲԸ մասնակցությունը տարածաշրջանային էներգետիկ ծրագրերում, ընկերության անվերապահ առաջնահերթությանն է պատկանում: Ներկայումս, բաց լինելով համագործակցության համար՝ «Հայֆուսզագարդ» ՓԲԸ-ն մտադիր է ակտիվ մասնակցել Իրան-Հայաստան գազատարի շինարարության և Աբովյանի ԳՄԿ վերակառուցման և արդիականացման ծրագրերի իրականացման գործում: Նշված ծրագրերը հաջողությամբ իրականացնելուց հետո և հասնելով Հայաստանի էներգետիկ անվտանգության բարձր մակարդակի, ինչպես

նաև հաշվի առնելով ազատական օրենսդրական դաշտը՝ «Հայրուսգագարդ» ՓԲԸ-ն ի վիճակի է դառնալ էներգակիրների առևտրի տարածաշրջանային բաց հրապարակ:

Միջպետական էներգետիկ ծրագրերը պետք է ուղղված լինեն ի նպաստ տարածաշրջանի բոլոր երկրների: Նշված ենթատեքստում Բաքու-Թբիլիսի-Ջեյխան նավթամուղը և Բաքու-Թբիլիսի-Էրզերում գազամուղը բացառություն չեն:

Ըստ գոյություն ունեցող հաշվարկների վերը նշված գազ- և նավթամուղերի տարանջումը Հայաստանի Հանրապետության տարածքով կարող էր տնտեսել ֆինանսական լուրջ միջոցներ, սակայն ենթադրվում է, որ նշված գազ- և նավթամուղերի առկայությունը տարածաշրջանում ինքնին կարելի է գնահատել որպես դրական գործոն:



Ժամանակակից գազի ստորգետնյա պահեստարանի առկայությունը ի վիճակի է ամենագազալի կերպով երաշխավորել իրան-Հայաստանին առնչվող գազի պայմանագրերը: Տարածաշրջանային ենթատեքստում, հնարավոր է նաև ստորգետնյա պահեստարանի համատեղ օգտագործում օրինակ՝ Վրաստանի հետ նպաստակ ունենալով բարձրացնել բնական գազի առաքումների հուսալիությունը հարևան երկիր:

Այսպիսով, կարելի է նշել, որ գազի մատակարարման երկու ճանապարհները, ժամանակակից գազի ստորգետնյա պահեստարանը և ավելցուկային էներգետիկ հզորությունները, ինչպես նաև ազատական օրենսդրությունը կարող են դարձնել Հայաստանը տարածաշրջանի էներգետիկ շուկայում "գազի և էլեկտրաէներգիայի առևտրի ազատական հրապարակ":

5. Եզրակացություններ

Կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. «ՀայՌուսզագարդ» ՓԲԸ-ի գլխավոր նպատակներից է՝ իր տնտեսական գործունեության մեջ առավելագույնս հաշվի առնել Հայաստանի Հանրապետության սպառողների բոլոր շահերը:
2. Բնական գազի գնի ձևավորման ընթացիկ դինամիկան տարածաշրջանի երկրներում ունի աճման կայուն տեմպեր՝ պայմանավորված ինչպես բնական գազի գնի աճի համաշխարհային տեմպերով, այնպես էլ օպերատոր-ընկերությունների ծառայությունների մշտական թանկացմամբ: Սրան հարկ է ավելացնել նաև Հայաստանի Հանրապետությունում ներկայումս բացակայող բնական գազի տարանցման հնարավորությունը, որը տեսականորեն հնարավորություն է տալիս հավասարակշռել վերը նշված բացասական տեմպերները:
3. Վերը նշված պայմաններում Հայաստանում անհրաժեշտ է ստեղծել բոլոր պահանջվող պայմանները ապահովելու երկրի տնտեսության համապատասխանությունը էներգետիկ ներուժի մեծացման նոր տնտեսական պայմաններին: Այդ կապակցությամբ, «ՀայՌուսզագարդ» ՓԲԸ իրականացնում է այս պատասխանատվության իր մասնեբաժինը իրականացնելով հանրապետության բնակչության զազամատակարարման վերականգնման ծրագիրը, որը ուղղված է բնական գազի իրացման շուկայի մեծացմանը:
4. Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության և մասնավորապես զազամատակարարման անվտանգության ներկա մակարդակը պահանջում է ամենակարճ ժամկետներում իրականացնել Հայաստանում բնական գազի առաքումների զանազանեցման ուղիների ծրագիրը և ստորգետնյա գազի պահեստարանի ընդլայնումն ու արդիականացումը:
5. «ՀայՌուսզագարդ» ՓԲԸ հիմնական նախապատվությունների թվին անհրաժեշտ է դասել ՀՀ զազամատակարարման վերականգնման և սպառողների գազի ֆիկացման ծրագրի հետագա կյանքի կոչումը, որի ակտիվ փուլը կավարտվի 2007 թ.-ին: Նշված ծրագրի իրականացումը թույլ կտա լուծել հետևյալ խնդիրները՝
 - Ավելացնել գազի իրացման ծավալները ներքին շուկայում և բարելավել ընկերության տնտեսական ցուցանիշները,
 - Մասնակիորեն կամ ամբողջովին փոխհատուցել բնական գազի գնման գնի հնարավոր աճը,
 - Ապահովել պայմաններ մի շարք արդյունաբերական և առևտրական օբյեկտների էկոլոգիապես առավել մաքուր տեսակի վառելիքի՝ բնական գազի փոխադրման համար,
 - Զգալիորեն թեթևացնել հանրապետության բնակչության ջերմամատակարարման վերականգնմանն ուղղված ծրագրերի իրականացումը՝ ապահովելով բնական գազի որպես վառելիքի օգտագործման տեխնիկական հնարավորությունը:
6. Ավելցուկային էներգետիկ հզորությունների առկայությունը և Հայաստանի ազատական օրենսդրությունը ի վիճակի են Հայաստանը դարձնելու լուրջ "խաղացողի" տարածաշրջանի էներգետիկ շուկայում: